ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՍԱՐՉԱՊԵՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

գ. Սարչապետ, Հեռ. 0 254 6 02 17, 0 254 6 02 18

N 117 -11
*27 հուլիս 2011թ.*

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ
ՊՐ-Ն Ա. ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ

*Կից ներկայացնում եմ ՀՀ Լոռու մարզի Սարչապետ համայնքի ղեկավարի 27.06.2011թ. թիվ 8-Ա, 27.06.2011թ. թիվ 9-Ա կարգադրությունների, 25.07.2011թ. թիվ 16-Ա որոշման, համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի 12.07.2011թ. թիվ 5-Ա, 27.07.2011թ. թիվ 6-Ա հրամանների և համայնքի ավագանու 25.07.2011թ. թիվ 16-Ա, 25.07.2011թ. թիվ 17-Ա որոշումների մեկական օրինակները:*

Համայնքի ղեկավար՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

Կատ. Աննա Բարոյան
0 254 6 02 17, 0 254 6 02 18

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶ**
**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ**
**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ**
**Հ Ր Ա Մ Ա Ն ԹԻՎ 6-Ա**

*27 հուլիս 2011թ.*

## ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 1-ԻՆ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏ ՍՏԵՓԱՆ ԱՎԵՏՅԱՆԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՐՁԱԿՈՒՐԴԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 156-րդ, 158-րդ, 159-րդ հոդվածներով, 161-րդ հոդվածի 2-րդ կետով՝ ՀՀ կառավարության 11 օգոստոսի 2005 թվականի N 1384-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Ստ. Ավետյանի կողմից ներկայացված 27 հուլիսի 2011 թվականի թիվ 14 դիմումը.

***<u>Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝</u>***

1. Սարչապետ համայնքի ղեկավարի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ /ծածկագիրը՝ 3.2-1/ Ստեփան Ավետյանին տրամադրել 2011 թվականի ամենամյա նվազագույն և լրացուցիչ /24 աշխատանքային օր/ արձակուրդը 2011 թվականի օգոստոսի 1-ի մինչև սեպտեմբերի 2-ն ընկած ժամանակահատվածի համար:
2. Ներկայանալ աշխատանքի 2011 թվականի սեպտեմբերի 5-ից:

*ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝* *ԱՆՆԱ ԲԱՐՈՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ N 17-Ա

25/07/2011

## ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԵՐԿՈՒ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, <Հրապարակային սակարկությունների մասին> ՀՀ օրենքով, հաշվի առնելով <ՄԱՐ-ՄՈՍ> ՍՊԸ-ի կողմից տրված ավտոմեքենաների գնահատման եզրակացությունը և Սարչապետ համայնքի ղեկավարի ներկայացրած Սարչապետ համայնքին սեփականության իրավունքով պատկանող երկու ՎԱԶ 2121 ավտոմեքենաները օտարելու մասին առաջարկը.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Սարչապետ համայնքին սեփականության իրավունքով պատկանող երկու ՎԱԶ 2121 ավտոմեքենաների օտարման պայմանները:
2. Հաստատել լոտերի մեկնարկային գները՝
   . ՎԱԶ 2121 40 000 /քառասուն հազար/ ՀՀ դրամ
   . ՎԱԶ 2121 220 000 /երկու հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ
3. Դասական ընդհանուր աճուրդի կազմակերպման մասին տալ հրապարակային ծանուցում զանգվածային լրատվության միջոցով:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՐՈՅԱՆ ԱՐՓԻԱՐ
2. ԴԱՎԹՅԱՆ ՀԱՄԼԵՏ
3. ՄԱՐԴՈՅԱՆ ՆՈՐԻԿ
4. ՄԽՈՅԱՆ ՋԱՎԵՆ

Համայնքի ղեկավար ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ՈՐՈՇՈՒՄ N 16-Ա

25/07/2011

**ՍԱՐՉԱՊԵՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԵՎ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՉ ՊԻՏԱՆԻ ԳՈՒՅՔԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԴՈՒՐՍԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 46-րդ հոդվածով և հաշվի առնելով <ՄԱՐ-ՄՈՍ> ՍՊԸ-ի կողմից տրված Սարչապետի գյուղապետարանի, մշակույթի տան և մանկապարտեզի օգտագործման ոչ պիտանի գույքի և սարքավորումների ապրանքագիտական եզրակացությունը.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Սարչապետի գյուղապետարանի, մշակույթի տան և մանկապարտեզի օգտագործման ոչ պիտանի գույքի և սարքավորումների դուրսգրման փաստաթղթերը և գույքագրման փաստաթղթերում կատարված համապատասխան փոփոխությունները:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՐՈՅԱՆ ԱՐՓԻԱՐ
2. ԴԱՎԹՅԱՆ ՀԱՄԼԵՏ
3. ՄԱՐԴՈՅԱՆ ՆՈՐԻԿ
4. ՄԽՈՅԱՆ ԶԱՎԵՆ

Համայնքի ղեկավար՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՍԱՐՉԱՊԵՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 16-Ա

գ. Սարչապետ, Հեռ. 0 254 6 02 17, 0 254 6 02 18

*25 հուլիս 2011թ.*

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԻՄՔԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կարգավիճակի մասին> ՀՀ օրենքը և նկատի ունենալով, որ բնակելի տան կառուցման ու սպասարկման համար օրինական հատկացված 1500 ք.մ հողամասում քաղ. Ժորիկ Ավետյանի կողմից Սարչապետ համայնքի փ. 6, նրբ.1, տուն 4 հասցեում 1987 թ. առանց իրավահաստատող փաստաթղթերի կառուցվել է բնակելի տուն, օժանդակ կառույցներ, որոնք չեն հակասում քաղաքաշինության նորմերին, չեն հաշվառվել որպես ինքնակամ կառույցներ.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Սարչապետ համայնքի փ. 6, նրբ.1, տուն 4 հասցեում քաղ. Ժորիկ Ավետյանի կողմից իր տնամերձ հողամասում կառուցված բնակելի տան և օժանդակ շինությունների նկատմամբ կատարել հիմքերի վերականգնում:

2. Ճանաչել վերոհիշյալ հասցեում 216.2 ք.մ բնակելի տան, 38.0 ք.մ անասնագոմի, 10.0 ք.մ բաղնիքի նկատմամբ Ժորիկ Ավետյանի սեփականության իրավունքը:

Համայնքի ղեկավար՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
# Հ Ր Ա Մ Ա Ն ԹԻՎ 5-Ա

*12 հուլիս 2011թ.*

## ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ ՀՐԱՉԻԿ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Համայնքային ծառայության մասին> ՀՀ օրենքի 19-րդ հոդվածով.

***Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ   Ե Մ՝***

Անցկացնել Սարչապետ համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 3-րդ ենթախմբում ընդգրկված գլխավոր մասնագետ Հրաչիկ Եգորի Առաքելյանի /ծածկագիրը՝ 2.3-1/ երկրորդ ատեստավորումը Տաշիրի քաղաքապետարանում 2011թ. օգոստոսի 12-ին ժամը 10:00-ին:

*ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝   ԱՆՆԱ ԲԱՐՈՅԱՆ*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ՍԱՐՉԱՊԵՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9-Ա

---

գ. Սարչապետ, Հեռ. 0 254 6 02 17, 0 254 6 02 18

*27 հունիսի 2011թ.*

### ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԵՐԿՈՒ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԱՐԿ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 13-րդ և 17-րդ կետերով.

**ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝**

1. Սարչապետ համայնքի ավագանուն ներկայացնել առաջարկ Սարչապետ համայնքին սեփականության իրավունքով պատկանող երկու ՎԱԶ 2121 ավտոմեքենաները օտարելու մասին:
2. Սարչապետ համայնքին սեփականության իրավունքով պատկանող երկու ՎԱԶ 2121 ավտոմեքենաների օտարման աշխատանքները կատարելու նպատակով կազմավորել հանձնաժողով հետևյալ կազմով.

| | | |
|---|---|---|
| 1. Ի. Մարդոյան | /1-ին կարգի մասնագետ/ | հանձնաժողովի նախագահ |
| 2. Ա. Բարոյան | /աշխատակազմի քարտուղար/ | հ/ժ անդամ |
| 3. Ս. Ավետյան | /1-ին կարգի մասնագետ/ | հ/ժ անդամ |
| 4. Ա. Բարոյան | /ավագանու անդամ/ | հ/ժ անդամ |
| 5. Ն. Մարդոյան | /ավագանու անդամ/ | հ/ժ անդամ |

Համայնքի ղեկավար ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՍԱՐՉԱՊԵՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8-Ա

գ. Սարչապետ, Հեռ. 0 254 6 02 17, 0 254 6 02 18

*27 հունիս 2011թ.*

## ՍԱՐՉԱՊԵՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԵՎ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՉ ՊԻՏԱՆԻ ԳՈՒՅՔԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԴՈՒՐՍԳՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով.

### ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Սարչապետի գյուղապետարանի, մշակույթի տան և մանկապարտեզի օգտագործման ոչ պիտանի գույքի և սարքավորումների դուրսգրման նպատակով կազմավորել հանձնաժողով հետևյալ կազմով.

| | | |
|---|---|---|
| 1. Հ. Առաքելյան | /գլխավոր մասնագետ/ | հանձնաժողովի նախագահ |
| 2. Ս. Բարսեղյան | /առաջատար մասնագետ/ | հ/ժ անդամ |
| 3. Հ. Դավթյան | /ավագանու անդամ/ | հ/ժ անդամ |
| 4. Զ. Մխոյան | /ավագանու անդամ/ | հ/ժ անդամ |

2.Հանձնարարել հանձնաժողովին՝
7-օրյա ժամկետում կատարել Սարչապետի գյուղապետարանի, մշակույթի տան և մանկապարտեզի օգտագործման ոչ պիտանի գույքի և սարքավորումների դուրսգրման աշխատանքները և գույքագրման փաստաթղթերում կատարել համապատասխան փոփոխությունները:

Համայնքի ղեկավար՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ